

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 30 ՕԳՈՍՏ., 1930

ԹԻԻ 15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԲՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԴԻՆ

ԹՐԿՄ. Բ. Կ. ԺԱՄԿՈԶԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՃԱՇԱԿԸ

ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՄԻ՝ ՓՐՅԸՆԵՐ ՏԷՐ

Վ. ՊԵԿԵԱՆ

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԷՋ

Յ. ՀԱԼԷՊԷԱՆ

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱԳԵԱՆ ԵՒ ՏԷՐ-ԶՕՐ

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ռ. ԷԶԱՃԵԱՆԻ ՄԱՀԸ

Ե. ԱՂԷԿԵԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼ

ԼՈՆՏՈՆԻ Ս. ՄԱՐԴԻՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՒԱՏՔ

ՇԱՀԵԿԱՆ ՆՕԹԵՐ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՒԼՃ ՀԱՂԷՊ

ՇԱՀԵԿԱՆ ՆՕՔԵՐ

ՄԻԱՑԵԱԼ Նահանգաց 108 մարդասիրական կազմակերպութիւնները տարեկան 60 միլիոն տօլար կուտան աշխարհի:

Ն.Ի.Ի. ԵՈՐԲ քաղաքի մէջ Իրվինկ Թրըսթ Գրմփէնի շէնքին տակ 69 ոտք խորուրթեամբ ստորերկրեայ գանձարան մը կը շինուի որ պիտի շրջապատուի ջուրի պատերով զողերու զէմ զրամը պաշտպանելու համար: Դրամատան պաշտօնեաները խողովակներու միջոցաւ պիտի կրնան ստորերկրեայ գանձարանը իջնալ:

ՏՐ. Հ. Մ. ՃԱՆՍԸՆ իր կատարած փորձերէն կ'եկրակացնէ թէ քունի մէջ մարդ աւելի հանգիստ կընէ երբ կծկուելով պառկի քան թէ զաւազանի պէս երկըննալով:

ԵՐՈՒՍԱԴԷՄԻ Երբայական համալսարանի կողմէ Սինայի անապատին մէջ կատարուած խուզարկութեան միջոցաւ գտնուած է միջատներու տեսակ մը որոնք անապատային թուփի մը աւելը կը ծծեն և ապա իբր անուշ թանձր հիւթ մը դուրս կը հանեն իրենց մարմիններէն: Ասիկա ապա կարծրանալով խոշոր կաթիլներու նման կը հաւաքուի թումբին վրայ: Հրեայ գիտունները կը կարծեն թէ այս էր իրենց նախահայրերուն կերած մանանան անապատի մէջ:

ՀՈԼԻՎՈՒՏԻ շարժապատկերի երկդ (ֆիլմ) պատրաստող գործարանը անպէտ դարձած երկրներէն քիմիական պարզ միջոցով մը ամսական 6000 տօլարնոց արծաթ կ'արտադրէ:

ՓՐՈՖ. Ֆ. ՊԵՏԷԼ գործիք մը հնարած է պէյպօլի գնդակի մեծութեամբ ուրուն անցուած բարակ փայտի մէկ կըտորը աղաւաններուն մէջ առնելով համրերը կրնան բոլոր նուազները լսել: Ակոսները պարզապէս ականջի թմբուկին ծառայութիւնը կը մատուցանեն:

ԵՒՐՈՊԱԿԱՆ քաղաքները ամերիկեաններէն աւելի մաքուր են կ'ըսէ Ամե-

րիկացի մը, որուն համեմատ աշխարհի ամենամաքուր քաղաքը Գերմանիոյ մէջ Միւնիխ է, Պաւարիոյ մայրաքաղաքը՝ Գերմանիոյ, Աւստրիոյ, Չեխոսլաւաքիոյ և Անգլիոյ մէջ նոր զրոյթեամբ առանց փոշի հանելու ազրահաւաքութիւն կը կատարուի:

ՏՐ. ԵԼՆԿ, Անգլիացին, հարկւրումեայ նկատուած մէկ միլիոն մարդիւրու պատմութիւնը խուզարկելէ վերջ գտած է որ միայն 30 մարդիկ հարկւր կամ աւելի տարիներ ապրած են: Բժշկութեան կողմանէ ստոյգ կերպով ճանչցուած ամենաերկար տարիքը 111 եղած է: Թուրք կամ Քուրտ Ջարօ աղային առասպելին զիտնականները հուսատ չեն ընծայիր:

ՎԵՐՋԵՐՍ 287 հօգա ծանրութեամբ քարէ ասուպ մը ինկած է. ասիկայ խոշորագոյն քարն է որ երկինքէն ինկած է: Երկաթէ ասուպներ աւելի ծանր են. Նիւ-Եորքի թանգարանին մէջ երկաթէ հատ մը կայ որ 36 թօնէ աւելի ծանր է: Տարեկան 20 միլիոն ասուպներ երկրի մթնոլորտը կը մանեն, մեծ մասը շատ մանր՝ հազիւ ցորենի հատիկի մեծութեամբ: Գիտունները կը խորհին թէ ասուպները երկնային զրութիւններու կազմութենէն վերջ աւելցած անպէտ Նիւթեր են, կարծես մեր շէնքերուն շինութենէն վերջ աւելցած ատաղձին նման:

ՄԻԱՑԵԱԼ Նահանգաց մէջ մէկ տարուան միջոցին երկու հազար 100 միլիոն անգլիական ոսկի կը ծախսուի հաճոյքի և զբօսանքի համար:

ԵԳԻՊՏՈՍԻ մէջ պտուղի և ծաղիկի ձեւերով ապակեղէն ուլունք գտնուած են: Իտալիոյ և Սուրիոյ մէջ ալ թուզի ձեւով գտնուած համրիչները շինուած են եգիպտոսի մէջ: Հնախօսները կը յայտնեն թէ թուզը Արարիայէն տարածուած է միջերկրականեան միւս երկիրներուն (Ք. Ա.) Ը.—Դ. դարուն:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՄԼԵՊ, 30 ՕԳՈՍՏ., 1930

ԹԻԻ 15

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇԻՉ ԳԻԾԸ

2. ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Քրիստոնէութիւնը այն օրէն ի վեր երբ Տրդատի և Լուսաւորիչի ջանքերով պետական կրօնք դարձաւ, մեծագոյն ազդակը եղած է Հայերու մէջ ազգային գիտակցութեան յառաջ գալուն մէջ: Դրեթէ պարսկացած Հայութիւնը բաժնուեցաւ արեւելեան մեծ պետութեան՝ Պարսից՝ ազդեցութենէն, անոր մշտնջենութենէն՝ որուն խոր հետքերը մեր լեզուին մէջ անջնջելի մնացած են մինչև այսօր — և դարձաւ դէպ ի Արեւմուտք այս անգամ հնթարկուելու յունական մշակոյթին ազդեցութեան: Սակայն երկու մեծ դէպքեր եկան Հայ ազգը և Հայ Եկեղեցին որոշ չափով դատելու նաև իր երկրորդ ներշնչարանէն, տալով Հայ Եկեղեցին անկախ, ինքնուրոյն և տոհմիկ զրօշմ մը: Ասոնցմէ առաջինն էր Հայ տառերու դիւարը կամ կատարելագործումը Մեսրոպի միջոցաւ, և նոր տառերով Հայ գրականութեան մը ստեղծումը Սահակ — Մեսրոպի և իրենց աշակերտներուն, Թարգմանչաց միջոցաւ: Եւ երկրորդ ոչ-նուազ կարեւոր դէպքն էր Հայց. Եկեղեցւոյ չմասնակցելը Գ. Եկեղեցական Տիեզերական Ժողովին, որ գումարուած էր Քաղկեդոնի մէջ Ե. դարու կիսուն: Այդ թուականէն սկսեալ Հայց. Եկեղեցին կրցած է դարերու փոթորիկներու մէջէն իր անկախ, անջատեալ գոյութիւնը պահել, վեհատեսիլ ալեքսա Մասիսի

նման, տալով ինքնուրոյն գիմագիծ նաև իր ժողովուրդին:

Հայ թագաւորութեանց կործանումէն վերջ Հայց. Եկեղեցին այս հանգամանքը աւելի շեշտուեցաւ. ան դարձաւ միակ պաշտպանը Հայ ցեղին բոլոր ժառանգին. ան եղաւ ազգային բոլոր սրբութեանց աւանդատունը, Հայուն հոգեւոր և մտաւոր միակ սնուցարանը, քաղաքական միակ ղեկավարը: Հետեւաբար Հայց. Եկեղեցին եւ Հայութիւնը գրեթէ յոյնացան, եւ անոր գործունէութեան գերագոյն մէկ նպատակը դարձաւ Հայց. Եկեղեցին և հետեւաբար Հայութեան պաշտպանութիւնը. եկեղեցասիրութիւնն ու ազգասիրութիւնը իրարու հոմանիշ դարձան: Հայ ազգը իր դարերու գոյապայքարին մէջ կանգուն պահող մեծագոյն ոյժը անվիճելիօրէն եղած է Հայց. Եկեղեցին: Պատմութեան անաչառ վկայութիւնն է այս:

Իրաց այս ընթացքը ծնունդ տուաւ երկու կարեւոր հետեւանքներու, որոնք բաղդորոշ ազդեցութիւն ունեցան ժամանակակից հայ կեանքին վիճակը որոշելու մէջ:

Ա. — Հայ Եկեղեցականը Հայուն ոչ միայն հոգեւոր հովիւն էր, այլ նաև անոր ուսուցիչը, դրագէտը, հասարակական գործիչը, քաղաքական կեանքին ղեկավարը: Անկարելի էր որ ոեւէ հաստատութիւն մը այսքան աշխատանք և օգտակար կերպով կարենար գործունէութիւն ունենալ: Հետեւաբար Հայց. Եկեղեցին տակաւ սու տակաւ անտեսեց իր հոգեւոր պարտականութիւնը ինչ որ

սկզբնական ու գերազոյն նպատակն էր, և իր հասարակական ազգային դերը աւելի ու աւելի ցցուն հանգամանք մը ստացաւ: Ոչ-հոգեւոր անհատներն ու կազմակերպութիւնները այս հայեցակէտէն սկսան Հայց. Եկեղեցին դիտել, և իր կատարած ազգային դերին համար միայն զնահատել զայն: Ասիկա աղէտալի եղաւ Հայց. Եկեղեցիին համար: Քանզի ոչ-եկեղեցական կազմակերպութիւնները—ըլլայ կրթական, զբոսական, կամ քաղաքական—օր մը ազգային հասարակական գործերը իրենց ձեռքը առնելով պիտի յանդգնէին եկեղեցիին գոյութիւնը ա՛յլ անպէտ նկատելու: Այսպիսի մտայնութեան մը արդիւնքը եղաւ Հայ կեանքին աշխարհականացումը, զոր լուազոյնս կը ցոլացնէ մեր ներկայ աշխարհիկ գրականութիւնը:

Երկրորդ հետեւանքը: Հայց. Առաքելական Եկեղեցիին գործունէութիւնը դարձաւ ինքնապահպանութեան շուրջ. անգիտակցաբար անոր նպատակը դարձաւ Հայց. Եկեղեցիին և անոր միջոցաւ Հայ ազգին գոյութեան պաշտպանութիւնը: Հետեւաբար անիկա մնաց պաշտպանողական զծին վրայ, անիկա որոշ մէկ շրջանէն վերջ չյանդգնեցաւ իր սահմանները ունցնելով իր պատգամը տալու ուրիշներուն: Իր գործունէութեան նշանակէտը դարձաւ իր իսկ գոյութեան տեւականացումը և պայծառութիւնը: Ասիկա կը նշանակէր հորիզոնի սահմանափակում, ինքնակիզրոն գործունէութիւն: Պէտք է խոստովանիլ թէ երկար դարերու փոթորիկները մեծ չափով պատասխանատու են այս վիճակին սահմանումին և տեւականացումին. բայց մենք հոս միայն նկատի կ'առնենք իրադրութիւնը և ոչ այդ իրադրութեան վերլուծումը:

Ահա այսպէս՝ Հայց. Եկեղեցին նախախնամական դեր կատարելով հանդերձ իբր հոյապաշտպան ազգային պատ-

կառելի հաստատութիւն մը տկարացաւ՝ որոշ չափով անտեսելով իր հոգեւոր դերը և մղուելով միշտ ազգային զօերու վրայ պաշտպանողականի մէջ մնալ:

Հայ Աւետարանական շարժումը ըսկզբէն ի վեր ազգայնական ուղղութեան հետեւած չէ, և անիկա իրեն նպատակ ըրած չէ հայկական աւանդութեանց, ցեղային ժառանգին աւանդապահը ըլլալ, Հայ մշակոյթի ստեղծման և զարգացումին և պահպանումին մէջ ուղղակի ազդակ մը ըլլալ: Ասիկա չի նշանակեր թէ Աւետարանականութիւնը ասոնց կը հակառակի, ասոնց մէջ արժէք չի տեսներ, և այդ մարդին մէջ ծառայութիւն չէ մատուցած. ոչ երբէք, այլ անիկա իրեն նպատակ ըրած է անտեսուած արժէքներու պատգամաբերը ըլլալ, անիկա ծագում առած է հոգեւոր շահերը պաշտպանելու համար:

Հայ Աւետարանական Եկեղեցիին անխախտ համոզումը միշտ սա եղած է թէ եկեղեցին հոգեւոր կազմակերպութիւն մ'է, որ հոգեւոր արժէքները ամէնէն առաջ և ամէնէն վեր կը դասէ. անիկա կրնայ ժամանակի և տեղի պայմաններուն համեմատ նոր հանգամանք ստանալ և նոր պարտականութիւններ ստանձնել, բայց որոնք միշտ պէտք է մնան երկրորդական աստիճանի վրայ, առանց մնասելու իր հոգեւոր գործունէութեան այլ ընդհակառակը նոր թափ մը տալով անոր:

Աւետ. Եկեղեցին ինքն իրեն նըպատակ մը չէ, անոր նպատակն է ծառայել նախ իր ժողովուրդին և ապա ուրիշներուն. Աւետ. Եկեղեցին իր գաւազին ցուցնելով բոլոր աշխարհը կ'ըսէ. «Ահա գործի դաշտդ»: Աւետարանականութիւնը սահման չի ճանչնար, անիկա անխախտ կը գործէ հոն ուր առիթ մը կը գտնէ:

Աւետ. Եկեղեցիին արժէքը և ոյժը ահա այս երկու կէտերուն մէջ կը զտնուորի: Բայց երբ օր մը դաւաճանելով իր իսկութեան դէմ դառնայ հոգեւոր արժէքէ զուրկ մեքենայ մը և ունենայ անձնակիզրոն գործունէութիւն մը պիտի դադրի գոյութեան իրաւունք մ'ունենալէ:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

3— . ԲՈՂՈՐ ՄԱՐԴՈՅ ԿԵԱՆՔԸ ԲԴԽԱԾ
Է ՀՕՐԸ ՀՈԳԻՆ

Յովհաննէսի աշակերտները Յիսուսի հարցուցին. «Ի՞նչ է Աստուծոյ թագաւորութեան նշանակութիւնը Բու կարծիքով:» Ան պատասխանեց. «Յովհաննէս ինձ նման քարոզեց Աստուծոյ թագաւորութիւնը: Անոր մէջ ամէն մարդ, որ քան ալ աղքատ ըլլայ, կրնայ օրհնուիլ:» Իսկապէս ժողովուրդին. «Առաջին անգամ Յովհաննէս քարոզեց Աստուծոյ թագաւորութիւնը, որը արտաքին աշխարհի մէջ չէ, այլ մարդուն հոգիին մէջ:» Հրեաները գացին Յովհաննէսը լսելու, բայց բան մը չհասկցան, քանզի իրենք արտաքին Աստուծոյ կը ճանչնային և Անոր մասին կարգ մը առասպելներ միայն գիտէին և ատենք կը քարոզէին, այդ պատճառով կը վարմանային, երբ տարբեր քարոզ կը լսէին: Յովհաննէս նոր ճշմարտութիւն մը կ' ուսուցանէր. «Աստուծոյ թագաւորութիւնը մարդոց մէջ է:» Այս քարոզութեամբ Յովհաննէս առանձինն շատ աւելին ըրաւ, քան բոլոր Հրեաները: Ան գերազանցեց օրէնքը, մարգարէները, կրօնական պաշտամունքի արտաքին ձեւերը: Ան սովորեցուց. «Աստուծոյ թագաւորութիւնը մարդոց մէջն է»:

«Ամէն բանի սկիզբն ու վախճանը մարդուն հոգիին մէջն է: Ամէն մարդ, իր Ֆիզիքական կեանքէն, մարմնաւոր հօր մը միջոցաւ մարմնաւոր մօրմէ յղացած ըլլալու իրողութենէն զատ, իր մէջ գիտակից, մարմնէն անկախ և ազատ հոգի մը ունի: Այս հոգին աներեւոյթէն ծնած, աներեւոյթ և ամէն բանի ահն ու ազդիւրն է և է այն՝ ինչ որ

մենք կը կոչենք Աստուած: Մենք կը ճանչնանք Զայն այնչափ, որչափ կ'ըզգանք Զինք մերմէջ: Հոգին մերկեանքին ազդիւրն ըլլալով պէտք է գերադասենք ամէն բանէ: Պէտք է Անոր համար ապրինք: Զայն մեր կեանքին հիմը ընելով ճշմարիտ և յաւիտենական կեանքը կը շահինք:

«Հայր հոգին, որ այս հոգին զրկած է մարդոց մէջ, զանոնք խաբելու համար զրկած չէ, այլապէս մարդիկ իր գիտութեամբ պիտի կարենային Զինք կորսնցնել: Այս հոգին մարդոց մէջ ըլլալով, մարդիկ կ' առաջնորդէ այն եզրակացուեան թէ՛ իրմով կրնան յաւիտենական կեանք ունենալ: Ուստի ան, որ այս հոգին իբր իր կեանքը կ' ընդունի, յաւիտենական կեանքը ունի: Իսկ այն որ չ'ընդունիր, ճշմարիտ կեանքը չունի: Մարդիկ կրնան ազատ կամքով կեանք կամ մահ ընտրել: Կեանք՝ հոգիին մէջ: Մահ՝ մարմնին մէջ: Հոգիին կեանքը բարութիւն և լոյս է: Մարմնին կեանքը չար և խաւար է: Հոգիով հաւատալ կը նշանակէ բարիք գործել, չհաւատալը՝ չարիք գործել: Բարութիւնը կեանք է, չարիքը՝ մահ:

«Աստուած՝ Արարիչը՝ Սկիզբներուն սկիզբը մեզմէ դուրս չենք ճանչնար: Անոր մասին մեր ունեցած ըմբռնումը այն կրնայ ըլլալ, թէ Ան մարդոց մէջ հոգին սերմանած է: Սերմանում առանց զատողութեան, ինչպէս սերմնացանը կ'ընէ: Լաւ հոգին վրայ ինկող սերմը կ'աճի, իսկ անպտուղ հոգին վրայ ինկողը կը փճանայ:

«Միայն հոգին կեանք կուտայ, ուստի մարդիկ պատասխանատու են զայն պահած կամ կորսնցուցած ըլլալուն համար: Չարիքը ապրելու ձեւին ընտրութեան մէջ սխալ ըլլալ է: Միայն երկու պարագայ կայ— Ապրիլ կամ չապրիլ: Ինչպէս աշխարհը ինքզինք ամէն մարդու կը ներկայացնէ, նոյնպէս ալ երկ-

նային թագաւորութեան գլխակցութիւնը կայ ամէն մարդու հոգիին մէջ: Իւրաքանչիւր մարդ, իր ազատ կամեցողութեամբ կրնայ մտնել կամ չմտնել Երկնային թագաւորութիւնը: Մտնելու համար հոգեկան կեանքի հաւատքը անհրաժեշտ է: Ով որ հոգեկան կեանքին կը հաւատայ, յաւիտենական կեանքը ունի:

4. ՈՒՍՏԻ ՀՕՐԸ ԿԱՄՔԸ ԲՈՂՈՐ ՄԱՐԴՈՑ ԿԵԱՆՔ ԵՒ ԲԱՐՈՐՈՒԹԻՒՆ Է

Յիսուս խղճալով մարդոց, որոնք ճշմարիտ օրհնութիւնը չէին ճանչնար, սովորեցուց. «Երանի անոնց, որ ո՛չ քաւարացուածք, ո՛չ գիրք և ո՛չ ալ զանաւոր ձեռք ձգելու հոգը ունին: Ապերժանիկ են անոնք, որ հարստութիւն և գիրք կը փնտռեն, քանզի աղքատ և ճնշուած մարդիկ Հօրը հրամանին մէջն են, իսկ հարուստ և իմաստուն մարդիկ այս անցաւոր կեանքին մէջ պատիւ կը փնտռեն և շահ ընել կ'աշխատին: Աստուծոյ կամքը կատարելու հաւատ ոչ ոք պէտք է վախճայ աղքատութիւնէ կամ արհամարհանքէ, այլ պէտք է ուրախանայ, ատով ցուցնելով իր ճշմարիտ երջանկութիւնը:

«Հօրը կամքը կատարելու համար, ինչ որ կեանք և բարօրութիւն կուտայ, մարդկութիւնը կատարելու է հետեւեալ հինգ հրամանները:—

1.—Ոչ ոքին զիջու հասցնելու է: Ընելու չէ այն գործը, որը կրնայ ուրիշ մը չարիք գործելու մղել, քանզի չարիքէն չարիք կը ծնի:

2.—Կիները հետապնդելու չէ և լքելու չէ այն կինը, որուն հետ անգամ մը միութիւն կազմուած է: Բանզի կիներու լքումը կամ փոփոխումը աշխարհի բոլոր ինկածութիւններուն պատճառ կ'ըլլայ:

3.—Ոչ մէկ երգում ընել, քանզի ոչ մէկ բան կրնայ խոստացուիլ, որչափ ատեն որ մարդը Հօրը ազդեցութեան մէջ

է: Երգումները դէռ վերջաւորութիւն կ'ունենան:

4.—Սխալին դէմ կռուելէ աւելի ներքել: Մեղմէ պահանջուածէն աւելին տալ: Չգատապարտել և օրէնքը չգործադրել, քանզի ամէն մարդ սխալական է և ոչ ոք կրնայ ուրիշը անսխալողել: Վրէժխնդրելով կրնանք սորվեցնել, որ ուրիշներն ալ վրէժխնդրեն:

5.—Տարբերութիւն չդնել հայրենակցի և օտարի միջև, քանզի բոլոր մարդիկ մէկ Հօր զաւակ են:

«Այս հինգ հրամաններուն կատարումը անհրաժեշտ է, ոչ թէ մարդոց գովասանելու ստանալու համար՝ այլ միայն անձնական բարօրութեան համար կատարելու է: Ուստի մարդոց երեւնալու նպատակով աղօթելն ու ծոմ պահելը պաշտած չէ: «Հայրը գիտէ ամէն բան, որ մարդոց պէտք է, հարկաւոր չէ մասնաւոր բաներու համար աղօթել: Միայն Հօրը թագաւորութիւնը խնդրելու է: Հօրը կամքն է, որ ուրիշի դէմ չբարկանանք: Ծոմ պահելը էական չէ, քանզի շատեր գովեստի համար կ'ընեն և այդ գովեստը կրնայ փուճ ըլլալ: Անհրաժեշտ է Աստուծոյ կամքը ուղղորդութեամբ կատարել, որուն պիտի հետեւի հանգիստը: Անցաւորին համար եղած հոգը չկրնար երկնային թագաւորութիւն տալ: Առանց կերակուրի ու հագուստի համար հոգ ընելու կարելի է ապրիլ: Հայրը կեանք կուտայ: Անհրաժեշտը Հօրը ազդեցութեան տակ ըլլալն է: Հայրը իր որդիներուն պէտքերը կը հոգայ: Մենք միայն հոգիին ոյժը խնդրելու ենք և Հայրը մնացածները պիտի տայ: Հինգ հրամանները երկնի թագաւորութեան ճամբան ցոյց կուտան: Այս նիզ ճամբան մեզ կ'առաջնորդէ դէպի յաւիտենական կեանքը: Սուտ վարդապետներ՝ ոչխարի մորթով զայլեր՝ միշտ կը ջանան մարդիկ մոլորեցնել այս ճամբայէն: Անոնց դէմ պաշտպանուիլ հարկ

է: Սուտ վարդապետներ միշտ կան և չարը կը վարդապետեն բարիին անուշով: Եթէ անոնք բռնութիւն և զլխատութիւն կ'ուսուցանեն, ըսել է սուտ վարդապետներ են: Իրենց ուսուցումներէն կրնան ճանչցուիլ:

«Աստուծոյ անունը կանչողները չէ, որ Հօրը կամքը կատարած կ'ըլլան, այլ այն որ բարիք կը գործէ: Ան որ այս հինգ պատուիրանքները կը պահէ ապահով և ճշմարիտ կեանքը պիտի ունենայ ու ոչ ոք կրնայ զինք զրկել անկէ: Ով որ չի կատարիր կ'ունենայ անապահով կեանք մը, որ շուտով պիտի առնուի իրմէ:»

«Յիսուսի վարդապետութիւնը զարմացումով և ուրախութիւնով կը լեցնէ, քանզի ազատութիւն կուտայ մարդուն: Բրիստոսի վարդապետութիւնը, Յովհաննէսին մարգարէութեան կատարուելն էր: Ան կ'ըսէր. «Աստուծոյ ընտրեալը մարդոց լոյս պիտի բերէ, պիտի նուաճէ չարը և հաստատէ ճշմարտութիւնը ազնուութեամբ, խոնարհութեամբ, և արդարութեամբ, ո՛չ թէ բռնութեամբ:»

Պէյրուք ԹԱՐԳ. Բ. Կ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ԾԱՇԱԿԸ

Յիսուս իր Բարի Հովիւի ուղերձին մէջ յայտարարեց թէ իր առաքելութեան նպատակն էր որ մարդիկ կեանք ունենան: Ուրիշ առթիւ Յիսուս յայտնեց որ ինքն իսկ է կեանքը: Մարդկային անխաղախ միտքը և քրիստոնէական փորձառութիւնը հաստատած են սոյն յայտնութեանց բացարձակ ճշմարտութիւնը: Կեանքը առանց Անոր անարժէք ֆիզիքական գոյութիւն մըն է սոսկ: Ծշմարիտ կեանքը Յիսուսով յայտնուած ճշմարտութիւններէն կը բղխի: Յիսուսի ապրած ու քարոզած սկզբունքներն են որ մարդուս կեանքին մէջ իրենց արժանաւոր տեղը գրաւելով անոր կուտան ի-

րական և միայուն արժէք, ներդաշնակութիւն, առողջութիւն և զեղեցկութիւն: Եւ այսպէս կեանքը կ'ըլլայ երջանկաւէտ, լեցուն խնդութեամբ և խաղաղութեամբ: Այդ սկզբունքներուն զլխաւորներն են հաւատք առ Աստուած, սէր, սրբութիւն, ժուժկալութիւն, արդարութիւն, ծառայութեան ու գիւ, ճշմարտութիւն և այլն: Այն կեանքը, որ այս սկզբունքներով կը կառավարուի՝ մտահոգութեանց տակ չ'ընկճուիր այլ միշտ լաւատես, խաղաղ և երջանիկ կ'ըլլայ: Այսպիսի կեանք մը ճոխ է միշտ իրական և արժանաւոր վայելքներով, որոնց կարգին են լուսագոյն տեսակէ բարեկամութիւններ, ծառայութեան և նուիրումի բերած գոհունակութիւնը, ընտանեկան կեանքի քաջութիւնները, բարիին համար ուրիշներու հետ զործակցութեան բերած երջանկութիւնը և վերջապէս Աստուածային գնահատումի ծայնը, զոր մարդ կը լսէ իր սրտին մէջ: Այս բոլոր սկզբունքներն ու ճշմարտութիւնները Յիսուսի անձին մէջ կեդրոնացած են, որով նա բացարձակ ճշմարտութիւնն էր որ արտայայտեց, հրը ըսաւ, «Ես եմ կեանքը»:

Որչափ ցաւալի է որ հակառակ այս ամենուն այս օր շատ շատեր քրիստոնէական սկզբունքներուն դէմ դաւաճանելով, և յաճախ ալ անոնց դէմ պատերազմելով կը կարծեն գտնել ճշմարիտ կեանքը: Անոնք մէկը միւսին ետեէն ի բաց կը նետեն այն բոլորը որ կեանքը արժանաւոր, առողջ ու երջանիկ կ'ընեն: Ընտանեկան սրբութիւնը բնութեան և մարդկային ազատութեան դէմ նախապաշարում մը կը հռչակեն անոնք, և շուտով կը մխրճեն անբարոյական տիղմին մէջ: Անոնք ժուժկալութիւնը անիմաստ զրկանք մը կը նկատեն: Պէտք է խմել ու գուարճանալ: Ինչո՞ւ չէ երբ այդ կերպով մարդ աւելի ուրախ կրնայ

ըլլալ: Պէտք է խօսիլ ինչպէս որ կը մղուի մարդ խօսելու, առանց ունէ հակակշռի—վերաւորիչ կատակներ, հայհոյանք անէծք, ամէնն ալ ներելի են. ինչո՞ւն է եթէ այդ կերպով սիրտը կը պաղի և զգացումները զոհացում կը գտնեն: Թշնամին սիրել ամօթ է, «անբարոյութիւն» է: Բարոյական կանոնները բաղդատական արժէք մը ունին. լաւ է ճշմարիտ խօսիլ, անկեղծ ըլլալ, իրաւունքը պահել: Բայց անոնք այդ կայանին վրայ ալ երկար չեն կրնար յամենալ: Սուտը ներելի է շատ անգամներ, եթէ ատով անիրաւութիւն չես ընել: Եթէ նպատակը բարի է, նոյն իսկ առաքինութիւն է: Թշնամիին կամ հակառակորդի մը հանդէպ սուտը անշուշտ ներելի է: Անոնց հանդէպ անկեղծ ըլլալ տխմարութիւն է: Անոնք իրաւունք չեն կրնար ունենալ ինչ չարիք որ կրնանք: Հասցնել անոնց անվարան հասցնենք:

Եւ այդ իսկ միայուն կայան մը չի կրնար ըլլալ. տակաւ ներելի սուտերու, կեղծիքի և կեղեքումի ցանկը կ'ընդլայնի, մինչև որ մարդ ազատ կ'ըզգայ կատարելապէս սանձարձակ ապրելու և գործելու: Ծշմարտութիւնը և արդարութիւնը կ'ըլլան տգիտութեան շրջանէն մնացած սնամէջ բառեր: Ի՞նչ են անոնք: Բարոյական աշխարհը մտայածին է. ամէն բան նիւթ է վերջապէս, և մարդ անասուն մըն է, որուն բարձրագոյն շահն է ամէն գնով և ամէն կերպով ամենախոշոր պատառը ապահովել և զուարճանալ: Արդիւնք՝ Սանձարձակ և անգոյն կեանք մը, զուրկ բարոյական իշխանէ, անսուրբ, անառակ, անզուտ, անգոյն, արիւնարբու, անասնային:

Յետագիւորութեան ու կործանումի այս սարսափելի վայրէջքին մէջ ի՞նչ մեծ բաղմութիւններ շարուած կը կենան, տարբեր աստիճաններու վրայ: Շատեր

ալ արդէն հասած են փոփոխ յատակը: Դժբախտաբար մեր խեղճ ազգն ալ, զլիաւորաբար իր երիտասարդ զաւակներէն, կարեւոր թիւ մը կը համրէ զոհերու օխտուր ցանկին մէջ:

Բնականաբար մարդ կը տարուի հարցնելու՝ եթէ այդ է կեանքը, արդեօք կ'արժէ՞ ապրիլ: Ի՞նչ կ'արժէ կեանք մը առանց իտէալի, կեանք մը ուրիշ դուրս ձգուած են բարոյական և հոգեւոր արժէքները, կեանք մը որ հոգեւոր աշխարհի և բնականութեան սկզբունքներով չի կառավարուիր, այլ ատոնց դոյութիւնն իսկ կ'ուրանայ, կեանք մը զոր սէրն ու սրբութիւնը, արդարութիւնն ու ճշմարտութիւնը չեն գեղեցկացուցած:

Բայց զարմանալին ան է որ, և տատր է որ կ'ուզենք ուշադրութիւն հըրուիրել, անոնք կը պնդեն թէ զոհ են այդ կեանքէն: Կ'ըսեն թէ այդ իսկ է կեանքը. իրենք ազատ են այլևս, բայց արձակապէս ազատ: Եւ անոնք կեղծ և արուեստական կը գտնեն ատկէ տարբեր ուրիշ կեանք: Քրիստոնէական վեհ սկզբունքները, սէրը, սրբութիւնը, ժուժկալութիւնը, ընտանեկան բոյնին քաղցրութիւնները, ազնուութիւնն ու ծառայութիւնը, ճշմարտութիւնն ու հաւատարմութիւնը, հուատք առ Բարին Աստուած, կեանքը Անոր հաղորդակցութեան մէջ, այս բոլորը ծրածաղիկի և սին կը գտնեն անոնք: Բայց ինչպէ՞ս կարելի է ատիկա:

Ծաշակի և փորձառութեան խնդիր է վերջապէս: Մարդիկ իրենց ճաշակին համեմատ կը գնահատեն կամ կը մերժեն ուրիշ կերպով կամ տարազ, ընկերական վարք ու բարք և կեանքի հանգամանք: Եւ կարելի է մշակել այնպիսի արտածէտ ճաշակներ, որոնք անբնական և կործանարար ըլլալով հանդերձ գոնէ ժամանակի մը համար զոհացումի պատրանքը տան իրենց տէրե-

րուն: Այսպէս ոմանք ափրոնի ուրիշներ մորֆինի ճաշակը մշակած են իրենց մէջ, և տեսակ մը գոհացում կ'ըզգան անոնց կրծող ու փտեցնող թմրութեանց տակ, մինչև որ կ'ընկճուին ու կը քայքայուին անոնց թոյներէն: Ասոր պէս է բարի խղճմտանքի, Աստուծոյ, արդարութեան և բանականութեան հակառակ ճաշակը, մեղքի ճաշակը, որմէ մարդկութիւնը անհատաբար և հաւաքաբար մահ և աւեր միայն հնձած է: Ու նաև փորձառութեան խնդիր է: «The proof of the pudding is in the eating». Իրողութիւնն այն է որ երբեք չեն ճաշակած քրիստոնէական կեանքի քաղցրութիւնն եւր: Գիտութեան ճամբան փորձի և փորձառութեան ճամբան է: Ան որ՝ միշտ իր «ես» ին համար ապրած է, և կեանքի իբր միակ նպատակը կը ճանչնայ իր անձը գոհացնել՝ չի կրնար ըմբռնել և հետեւաբար գնահատել քրիստոնէական կեանքը, սիրոյ և առաքինութեան կեանքը: Ան որ կոյր ծնած է ինչպէս կրնայ գնահատել լոյսի գեղեցկութիւնն ու վայելքը: Պզտիկ տղու մը հարցուցին թէ կաքաւին ո՞ր մասը ամենէն համեղ կ'ըլլայ. «Թեւերը» պատասխանեց խեղճ տղան. քանի որ իր անձնասէր երէց եղբայրը կարծր թեւի կտոր մը կը հրամցնէր իրեն ամէն անգամ որ կաքաւ որսալու ըլլար, և մտտ ու համեղ մասերը ինքը կ'ուտէր:

Բարեկամս, փորձէ Աստուծոյ ճամբան. ճաշակէ այն կեանքը զոր Քրիստոս կը հրամցնէ քեզի, և պիտի գտնես որ դուն չէիր գիտեր թէ ինչ է կեանքը: Հետեւէ խղճիդ ձայնին, ինչ որ մնացած է անկէ: Հնազանդէ այն ճշմարտութիւններուն, որոնց տաքալոյս չունիս. խղճմտօրէն կատարէ այն պարտականութիւններդ որոնց համոզուած ես և անկողմնակալ ոգւով երկիւղածօրէն և ազօթքով փնտռէ լայնագոյն ճշմար-

տութիւններ. ապրէ և փնտռէ, և պիտի գտնես Ջայն որ կեանքն է, և իրական վայելք, խնդութիւն և խաղաղութիւն:

Մի առարկեր թէ ուրիշներ քու «կեանքը» փորձած չեն: Ընդհակառակը անոնք որ Քրիստոսի կեանքը կ'ապրին՝ մեծամասնօրէն եկած են մեղքի աշխարհէն, ուր դու կը բնակիս այսօր: Այդ կեղծ կեանքի տաժանքէն յուսահատ, յոգնած ու պարտուած՝ անոնք եկած են Յիսուսի և հոն գտած են կեանքը բնական, վերացուցիչ ու երջանիկ: Անոնց միակ ցաւը եղած է թէ ինչո՞ւ այդքան ուշ եկան:

Դուն ալ փորձէ:

«Ճաշակեցէք ու տեսէք որ Տէրը Բարի է:» Սաղմ. 34. 8:

Պիթիսու

ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԷՍԱՆԵԱՆ

ՄԻ ՓՐՅԸՆԵՐ, Տէ՛ր

Արտիս պարտէզին, մի՛ փրցըներ, Տէ՛ր,
Ծաղիկն ու վարդեր:
Թոյլ տու՛ր որ անոնք միշտ գեղազարդեն
Ու բոյրով կարթեն:
Դեղն ու հրապոյրն իմ կեանքիս, ո՛վ Տէ՛ր,
Ինձմէ մի՛ գատեր:
Չէ՞ որ Դուն տիպարն ես գեղեցկութեան
Յար անապական:

Արտիս պարտէզին, մի՛ փրցըներ, Տէ՛ր,
Ծաղիկն ու վարդեր:
Թոյլ տու՛ր որ անոնք աճին, ուռճանան,
Կերտեն նոր-Քանան:
Ճոխութիւն կեանքիս մի՛ չքացներ, Տէ՛ր
Սուգով մի՛ պատեր:
Չէ՞ որ Դուն ակն ես կեանքի ճոխութեան
Անհուն, անսահման:

Արտիս պարտէզին, մի՛ փրցըներ, Տէ՛ր,
Ծաղիկն ու վարդեր:
Թոյլ տու՛ր որ անոնք ապրին առ յաւէտ
Կեանքը արժաւէտ:

Մահն անգութ, դաժան, մի՛ զրկեր, ո՛վ
 Տէ՛ր,
 Սիրտըս մի՛ քանդեր:
 Զէ՞ որ Դուն խոստումն ես անմահութեան
 Այժմ ու յաւիտեան:
 Ժընեւ
 ՎԱՐՍՆԵՐԿ ՊԷԿԵԱՆ

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊՈՒԷՆԱՍ
 ԱՅՐԷՍԻ ՄԷՋ

Պուէնոս Այրէս մեկնելէս մի քանի օրեր առաջ Վեր. Ս. Ս. Մանուկեանի հետ պատահական տեսակցութիւն մը ունեցայ: Երբ իրեն յայտնեցի թէ Պուէնոս Այրէս այլտի երթամ ինծի սապէս ըսաւ. «Շատ մը Հայեր Հարաւային Ամերիկա կը գաղթեն, որ բոլորովին Կաթոլիկ երկիրներէ կը բաղկանայ. մեր Հայ Բողոքականները պէտք է չատ իմաստուն եւ շրջահայեաց պանուին, որ պէտքի զրեմք հիւրընկալող երկրին ժողովուրդը չզրգուին եւ անոնց թշնամութեան առարկայ չըլլան:»

Մեր սիրելի բարեկամին թեւադրութիւնը իմաստութեան խրատ մ'էր. եւ սակայն, փառք Աստուծոյ, այս թեւադրութիւնը Պուէնոս Այրէսի մէջ կիրարկելու երբեք պէտք չունեցանք: Պետութեան պաշտօնական եկեղեցին թէպէտ «Հռովմէական Առաքելական Կաթոլիկ Եկեղեցին» է, եւ որուն տարեկան մօտաւորապէս տասը միլիոն փէտո կը յատկացուի կառավարութեան, կրօնի եւ խղճի ազատութիւնը ապահովուած է սահմանադրութեամբ, եւ ամէն տեսակ պաշտամունքի ձեւը եւ կրօնական փրփրականտը կառավարութեան պաշտպանութիւնը կը վայելէ: Խօսքի, մամուլի եւ հաւաքոյթի ազատութիւնը թէ՛ անհատներու եւ թէ՛ կազմակերպութիւններու բնական մէկ իրաւունքը ճանչցուած է կառավարութեան եւ ժողովուրդին կողմանէ, օրինապէս եւ սովորութեամբ, այնչափ որ հանրապետութեան նախա-

գահն իսկ չի կրնար այդ իրաւունքը ետ առնել: Նախագահի եւ գահիճի անդամներուն թէ՛ գործունէութիւնը եւ թէ՛ անձնաւորութիւնը փողոցի անկիւնները եւ հրապարակներուն վրայ, ոտտիկանի մը հաղողութեան տակ, ամէն տեսակ քննադատութեան եւ յարձակումի առարկայ կ'ըլլան եւ ոեւէ մարդ քաղաքավարութեան սահմանին մէջ եւ երբեմն ատկէ դուրս կրնայ իր ուզածը խօսիլ: Ասիկա նոյնչափ ճիշդ է կրօնական հաւատալիքներու մասին ալ: Բողոքականները յաճախ հրապարակներու եւ պարտէզներու մէջ իրենց քարոզչություն եւ ճաներուն մէջ հանրութեան առջեւ կը պարզեն Կաթոլիկ Եկեղեցիին թերութիւններն ու զեղծումները եւ Աւետարաններու ներկայացուցած Գլխատոմս ու Քրիստոնէութիւնը կը վարդապետեն:

Պուէնոս Այրէս հասած իմ առաջին օրէն իսկ ուշադրութիւնս զրաւեց բողոքականութեան վայելած ազատութիւնը, որմէ շատ ալ օգտուեցայ: Մէկը չունէինք որ մեզ իր տունը ընդունէր կամ մեզի առաջնորդէր: Մեզի ըսին թէ թրքահայատականները — թէպէտ Թուրքիայէն մերժուած բայց ամէն տեղ Թուրք կը նկատուինք — կառավարական հիւրանոցը չեն ընդունուիր: Տասը-քըսան քնտանիքներ մեծ ու պզտիկ, կիներ եւ մանուկներ մեր գոյքերով նաւահանգիստի մօտ փողոցներու մէջ մընացինք: Պանդուկներու դորձակալները մեր չուրջը առած էին, բայց անոնց տալիք դրամ չունէինք: Մեր ընելիքը շուարած սպասեցինք. իրիկուն եղաւ. օդը պաղեցաւ, չոյնաւալ մէջ կէսօրուայ ճաշն իսկ չէինք բրած: Յանկարծ համազգեստով մի քանի Խորդեր եկան, ոստիկաններու հետ տեսակցեցան, մի քանի կառքեր վարձեցին, մեզ եւ մեր գոյքերը անոնցմով փոխադրեցին եւ մի քանի սենեակներու մէջ գետեղե-

ցին: Ասոնք օգնութեան հրեշտակներ էին—Փրկութեան Բանակի պաշտօնեաները: Հասկցանք որ թէ՛ Թուրքիան և թէ՛ Ամերիկան անհամ ըլլալէ ազատ պահողները քրիստոնեաներ են: Եթէ ճշմարիտ քրիստոնեաներ չըլլան Թուրքիան ալ համ չունի, Ամերիկան՝ ալ: Օրէնք ու միջազգային յարաբերութիւնները հարուստ Արժէնթինի կառավարութեան թեւերը կաշկանդած էին, բայց Քրիստոսի հոգին կարօտները փնտռող մարդիկ յառաջ բերած է:

Մի քանի օր հոգքը երբ սկսայ քաղաքին մէջ պտտուիլ ամէն տեղ նշանատախտակներու հանդիպեցայ, որոնք (culto evangélico) «Աւետարանական Պաշտարանք» մականորութիւնը կը կրէին: Բողոքականները կաթոլիկ մայր եկեղեցիներու պէս հոյակապ և հսկայական շէնքեր թէպէտ չունին, և սակայն Աւետարանը համարձակ կերպով և խանդով կը քարոզին մեծ կամ պզտիկ սրահներու և եկեղեցական շէնքերու մէջ, հրապարակներու և փողոցի անկիւննադարձերուն վրայ:

Պուէնոս Այրէսի մէջ Աւետարանը առաջին անգամ քարոզուած է 25 Մայիս 1867 ին, ասկէ 63 տարի առաջ Մեթոտական միախմբար Տր. Չան Թ. Թամսընի կողմանէ, որուն ծննդեան 87 ըգ տարեդարձը հերու Յունիսին տօնուհեալ իր բարեկամներուն կողմանէ: Պուէնոս Այրէսի մէջ ամենահին և լաւ հաստատուած բողոքական յարանուանութիւնը Մեթոտական Եպիսկոպոսական Եկեղեցին է, որմէ հոգքը կուգայ Մկրտական Եկեղեցին: Ուրիշ Աւետարանական հաստատութիւններ և եկեղեցիներ են «Փրկութեան Բանակը», «Եղբայրներ», «Աշակերտներ», «Հոգեպաշտեան»ներ, «Շարաթապահ» ներ, Երիցականներ, Լուսերականներ, Նազովրեցի Եկեղեցին, Ե. Ք. Ընկերակցութիւն, որոնք սպաներէն լեզուով Աւետարանը կը քարոզեն ժողո-

վորդին: Երկրին ճիշդ կեդրոնը Փամֆայի կուսակալութեան մէջ Մեկնոնայր Եկեղեցին ալ լաւ գործ ունի: Երկրին հարաւային կողմը, Փամֆայի և Ուրուկուէյի մէջ Ուալտէնսեան եկեղեցիները գործունէութիւն ունին: Եկեղեցիներու փրփականտի լաւաւոյն միջոցն են զրգոյկներն ու թերթերը, որոնցմէ տասը հազարաւոր օրինակներ ամէնշաբաթ կը ցրուին: Անգլիական և Ամերիկեան Ս. Գրքի ընկերութեանց շնորհիւ շատ մը տուներու մէջ Ս. Գիրքը մուտ գտած է. ասոնք կէս դարէ ի վեր Ս. Գիրքը կը տարածեն հոս:

Մեթոտական Եկեղեցին ունի երեք պաշտօնական եկեղեցական թերթ, Մկրտական Եկեղեցին՝ մէկ, Լուսերականը՝ մէկ, Շարաթապահը՝ երկու, Եղբարքը՝ մէկ, Աւետարանական Երիտաւարաց Միութիւնը՝ (միջյարանուանական) մէկ, Նազովրեցի Եկեղեցին՝ մէկ. ասոնք երկշաբաթաթերթ կամ ամսաթերթ են: Ասոնցմէ զատ զարգացեալ գասակարգի համար «La Reforma» (Բարեկարգութիւն) անուն թերթ մ'ալ կը հրատարակուի:

Վեր. Պրատենինկի նախագահութեան տակ գործող «Գործակցութեան Մասնախումբ» մը կայ, որուն նպատակն է տարբեր յարանուանութիւններու մէջ գործակցութիւն ստեղծել և որ կ'աշխատի կարգ մը կէտերու մէջ եկեղեցիները միութեան բերել: Յաւալին այն է որ կարգ մը եկեղեցիներ երբեք յօծար չեն տէ մէկ գործակցութեան: Ասոնց մէջ առաջին շարքին վրայ կը գտնուին «Ճղթայրները», որոնցմէ հոգքը կուգան Մկրտականները: Եղբայրներու եկեղեցին ոչ ձկնադրեալ հովիւ կամ քարոզիչ, ո՛չ ալ հաւատոյ հանգանակ մը եւ կամ կանոն մը ունի: Ասոնց հովիւը կամ քարոզիչը թոշակ չ'ստանար, հետեւաբար եկեղեցին պիտոճէ չ'ունենար: Ասոնք միայն հոգեւոր մարդին մէջ կը

կը գործեն, կրթական կամ ընկերային գործունէութիւն երբէք չունին: Մեթոտականներն ունին նախնական, երկրորդական և հատ մ'ալ առեւտրական վարժարաններ, ունին նաև որբանոց մը և «Միացեալ Աստուածաբանաման ձեմարան» մը: Մկրտականները ունին մէկ նախնական և մէկ ալ քարոզիչ պատրաստող դպրոց մը: Շարաթապահներն ալ դպրոցներ և աստուածաբանական վարժարան մ'ունին:

Ժողովական եկեղեցիներու այս մեծ ընտանիքին մէջ անդամ մ'ալ աւելցաւ Հայ Աւետ. Ժող. Եկեղեցիին կազմութեամբը: Միւս եկեղեցիները մեզ իբր քոյր եկեղեցի մը ընդունեցին և մեզի օգնութեան ձեռք երկարեցին: Հայ աւետարանականները այս երկրին ինչ պիտի տան իրենց վայելած ազատութեան և ապահովութեան փոխարէն, Աւետարանը սիրող և ապրող սերունդ մը թէ անտարբեր և իր կոչումին անգիտակից անհատներ:

Պռեկոս Այրես

Յ. Մ. ՀԱԼԷՊԼԵԱՆ

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱՋԵԱՆ ԵՒ ՏԷՐ-ՋՕՐ
(Շարունակութիւն եւ վերջ)

Մեր գտնուած տեղը, լսած պատմութիւնները Վեր. Փափազեանի բոլոր մնացած ոյժը սպառեցին հոս: Նստելու ա'լ տնկարող Յճ աստիճան ջերմութեամբ ան պառկեցաւ: Այսու հանդերձ հոն կարելի չէր մնալ, և մեկնեցանք. թրջած թաշկինակով ան կ'աշխատէր իր տաքութիւնը թիթեւնելու: Վերջապէս 190 քիլոմէթր ճամբորդելէ հոգը ՀԱՍԻՃԷ հասանք, ուր բնիկ Տէօրթեօլցի Տիար Աւետիս Գուլումեան, մեզ չճանչնալով հանդերձ, կատարեալ քաղաքավարութեամբ մեզ հիւրնկալեց և իր կարելին ըրաւ մեզ հանգստացնելու: Տեղս՝ վերջին մի քանի տարիներու միջոցին յառաջ եկած մեծ գիւղ մը կամ աւան մ'է:

Հայութեան թիւն է 250, որուն կարեւոր մէկ մասը կը բաղկանայ Տիարպէթիբցիներէ, իսկ որոշ մէկ մասն ալ Շէտտատիլէի ջարդէն մազապուրծ մանուկներէ՝ որոնք զիականերու մէջ կ'իսամեռ վրճակին մէջ պահուած և ապա Արարներու քով ապաստան գտնելով ողջ մնացած են: Ասոնցմէ մէկը ժպտուն դէմքով և բնական ձեով իր արկածալից կեանքին պատմութիւնը ըրաւ մեզի: Այս տղան տնկատեղած մեզի կը յիշեցնէր կրակի փուռէն անցած և առիւծներու որջէն ելած Հրեայ երիտասարդները: Հաւածէն հոգեւոր հովիւէն թէպէտ զուրկ սակայն վարժուհիի մը խնամքին տակ դպրոց մ'ունի, որուն շէնքին մէջ իրիկունը գեղեցիկ հաւաքօթ մ'ունեցանք հոն ժողովուրդ եղբայրներու մասնակցութեամբ: Վեր. Փափազեան հակառակ իր հիւանդութեան իր գիշերնոցով եկաւ և մի քանի վայրկեան խօսելու աշխատեցաւ եւ խոստացաւ իր տեսածները և իրենց ջանքերը տեղեկագրել իրենց Ամերիկա գտնուած հայրենակիցներուն: Կերպով մը գիշերը անցուցինք. Վեր. Փափազեանի հիւանդութեան պատճառաւ թէպէտ պահ մը Հալէպ վերադառնալ ուզեցինք, բայց խորհելով թէ ասիկա մեր նպատակին պարտութիւնն է եւ մանաւանդ քաջալերուելով չոգեկառքի միջոցաւ վերադառնալու մեր յոյսին մէջ այնպէս կը կարծէինք թէ ճամբուն կարճը և հանգիստը մեր առջեւ կը գտնուի ոչ թէ ետեւը: Եւ նոյն օրը ճամբայ ելանք մեր հետը առնելով Վեր. Շիրաճեանը, որ նոյն գիշեր հոն հասած էր: Ծամբան եղեկիէլի յիշած իրադարձութիւնները իմեցինք, եւ տարազիւ Խորայէլի ուռիները գիտեցինք, որոնց վրայ իրենց նուագարանները կախած էին: 45 քիլոմէթր ճամբորդելէ հոգը հասանք Ծաղճաղ գետակի եզիրքը Թէլ-Պրազի մէջ նոր հաստատուող հայկական գիւղերը: Վեր. Ա. Շիրաճեանի և ըն-

կերներուն ջանքը, հաստատամտութիւնն ու զոհողութիւնը հասկնալու համար անհրաժեշտ է զոնէ անգամ մը առաւ ատեն տեղս այցելել: Մարդ կ'ապշի կը մնայ միայն տեսնելով անոնց աշխատիլն ու աշխատցնելը այդ տաք դաշտին մէջ, տաք և աւազախառն հովի մէջ, գիշեր ու ցերեկ, առանց բաւարար չափով հանգստանալու: Եթէ դրամի կամ փողքի համար այս բոլորին կը հանգուրժին անպատճառ յիմար պէտք է ըլլան, և եթէ այս նպատակը չունին ուրեմն կը համոզուիս որ աստուածատէր և ճշմարիտ ազգատէր են: Թուրքիայէն փախստական 600 քրդախօս Հայ ընտանիքներէն 200ը հոս ապաստանած են: ամէն օր նորերը կը հասնին: Ասոնք երկու խումբերու բաժնուած են, ջանք կը թափուի ընդարձակ հողերու և աղիւսալէն տնակներու մէջ պատուարելու զանոնք: Եղած կարգադրութիւնները պատիւ կը բերեն թէ՛ անոնց, թէ՛ զանոնք ներկայացնող Հայ և օտար անձնաւորութիւններու:

Երկու ժամ մնացինք Թէլ Պրազի մէջ, ուսկից 45 քիլոմէր դամբորդելով ԳՈՒՄՐՆԻԸ հասանք: Տեղս, Սուրիայ և Թուրքիոյ սահմանին վրայ նորածին բայց իր տարիքին համեմատ զարմանալի արագութեամբ մեծցող միւս գիւղ մը կամ քաղաք մ'է: Նուսէյպին (Մըմըն), որ տեղէս 20 վայրկեան հեռութեան հողին վրայ կը գտնուի, կարծես նախանձօտ օգիտով կը դիտէր Գամըլըն, և քինախնդիր զգացումներով կը լեցուէր զինքը լքելով հետզհետէ Գամըլըն գաղթող իր բնակչութեան հանդէպ: Աւանին բնակչութիւնը կը բաղկանայ 1000 տուներէ, որոնց 400 ընտանիքը Թուրքիայէն նոր հասած Հայեր են, իսկ մնացածը իսլամ և Հրեայ են: Պարտաւոր և հիւանդացած Վեր. Գափազեանի համար կարելի միակ հանգստավայրը օթոյի կայտրանին բակը գտնուած

մահճակալ մըն էր: Հոս գտնուող բըժիշկէ մը կարելի եղաւ լուծողական մ'առնել և այս կերպով գիշերը անցուցինք: Առտուն շոգեկառքով Հալէպ վերադառնալու յոյսը ի դերու եղաւ և հասկցանք որ շոգեկառքը Վեր. Գափազեանի համար ո՛չ կարելի է և ո՛չ ալ յանձնարարելի: Ստիպեալ նոյն ճամբով Հասիճէ և ապա Տէր-Զօր ետ դարձանք, ուսկից «Եփրատ»ը անցնելու ատեն հրաշքով ազատեցանք մակոյկին մէջ եղող անզուսպ ձիերու կիցերով վայրկեանական մահացումի վտանգէն: Յաջորդ օրը 10 ժամուայ ճամբան աւարուած օթոյով 15 ժամուան մէջ առնելով հասանք Հալէպ: Նախախնամական կարգադրութեամբ կարծես մէկ օր առաջ Տէր-Զօրի և Հալէպի միջև սաստիկ անձրեւ եկած ըլլալով օդը զովացած և մեր ճամբորդութեան միջոցին երկինքը ամպերով ծածկուած ըլլալով հիւանդին ջերմութեան աստիճանը բնականի իջաւ և մենք հանգիստ քաղաք մտանք: Եւ այս 1430 քիլոմէրը երկար ճամբորդութեան միջոցին մեր վայելած բոլոր շնորհքներուն համար Աստուծոյ փառք տուինք:

Այս ճամբորդութեան միջոցին մեր ուշադրութիւնը զբաղող կէտեր են. —

1. Ֆրանսական կառավարութիւնը այս անապատներու մէջ ապահովութիւն հաստատած է: Օթոյի միջոցաւ ժամերով մեր ճամբորդութեան միջոցին թէ մեզ և թէ ուրիշ ճամբորդ կատարելապէս ապահով կ'զգայինք: Ասոր շնորհիւ Հայերն ալ առանց վախի կրնան ճամբորդել և իրենց ապրած գիւղերուն մէջ կը գործեն իրենք զիրենք կատարելապէս ապահով զգալով:

2. Տարագրութեան միջոցին Արաբները Հայերուն եթէ ոչ գոյքերը գոնէ կեանքերը պաշտպանած են: Ասոր շնորհիւ շատ մը մանուկներ կրցած են վերապրիլ: Արաբներու քովէն նոր և կողմերուն ինչպէս նաև տակաւին ա-

նոնցմէ բաժնուիլ չուզող այրերու և կիրներու անխօս վկայութիւնը այս է:

3. Հետեւաբար համոզուեցանք թէ մեր ազգային մեկ պարտականութիւնն է Աւրաքներու հանդէպ երախտապարտ զգացում տածել: Մի քանի օթոյի վարիչները յանդիմանեցինք զանոնք յանցաւոր գտնելով այս պարտականութեան կատարումին մէջ. բայց այսպիսի սխալները չտեղի բոլոր Հայերու պարտականութիւնն է:

4. Տեսնեմք հոյի ստիպութիւն յիայ Սուրիոյ մէջ: Ժամերով ճամբորդէ և չես կրնար հողին ծայրը գտնել, միայն թէ մշակներ կը պահպան: Հասկցանք թէ այս երկրին համար փորձանք չէ այլ օրհնութիւն եղած են Հայերը, որոնք անապատները շէնցուցած և երաշտ հողերու մէջ ովասաններ յառաջ բերած են: Անոնք բնիկներուն իրաւունքը չեն կողոպտեր այլ ամէն տեսակ բերքերով անոնց կեանքերը կ'երջանկացնեն: Ուստի մեզի այնպէս թուեցաւ թէ ամէն հայրենասէր Սուրիացիին համար իմաստուն եւ օգտակար ընթացքն է Հայը հիւրամեծարութեամբ ընդունիլ:

ՍԻՍԱԿ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԱՀ

ՏԻԱՐ ՌՈՒԲԷՆ ԷՋԱՃԵԱՆԻ

Ազգային ծանօթ և սիրուած գործիչ Տիար Ռուբէն Էջաճեան Օգոստոս 17ին կնքեց իր մահկանացուն, յետ կարճատե և անողոր հիւանդութեան, խոր սուգի մէջ թողնով իր ընտանիքը և քաղաքիս Հայ Ժողովուրդը:

Հետեւեալ օր, 18 Օգոստոս, կէսօրէ վերջ ժամը 8ին տեղի ունեցաւ յուղարկաւորութեան արարողութիւնը տեղիս Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան բազմահարիւր յուղարկաւորներու:

Պէջրութի Առաջնորդ և Կաթողիկո-

սական փոխանորդ Կարոյեան Սրբազան զբաւոր զեղեցիկ դամբանական մը կարգաց, ներկայացնելով հանգուցեալին բարեմանութիւնները, առաքելութիւններն և ազգանուէր կեանքը:

Անգոթ մահը քեզ ալ խից մէզմէ և աարաւ, սիրելի Էջաճեան, վաղահաս եղաւ քու մահդ, վաղահաս եղաւ, ուրովհետեւ տակաւին պէտք ունէինք քեզի, տակաւին խնդիրներ կային լուծուելիք՝ քու մասնակցութեամբդ: Ազգովին կ'ողբանք քու մահդ. կը հաւատանք թէ դուն չմիռար, այլ զացիր՝ Հայ իրականութեան մէջ նախախնամական գեր կատարած Հ. Բ. Ը. Միութեան արժանաւոր և սիրեցեալ նախագահին քով հոն բարեսիրական աւելի լայն ու ընդարձակ ձեռնարկներ ընելու:

Երթաս բարեաւ. յարգանք անթառամ յիշատակիլ և հանգիստ ածիւննեւրուդ:

Վեր. Ե. Կէօքէօզեան յայտնելէ յետոյ հանգուցեալի տխուր մահուան առթիւ իր զգացած վիշտը, պերճիմաստ քարոզ մ'ըրաւ. «Մահը դուք չ'ունի, մահը խիղճ չ'ունի. ան կուգայ կը խլէ մեր է՛ն սիրելիները, մեր սիրոյն ու գուրգուրանքին առարկայ սիրասուն փոքրիկները, մեր լոյսն ու յոյսը եղող ծաղկահասակ երիտասարդներն ու երիտասարդուհիները, մեր յարգանքին ու սկիսածանքին արժանի պապուկները: Մահը դուք չ'ունի»:

«Մահը աղաչանք ու պաղատանք չի լսեր, ան իր... գործը չի յետաձգեր: Մահը կողմնակալութիւն չ'ընէր, ան կուգայ անխտիր Հայուն ու թուրքին, հարուստին ու աղքատին, գիտունին ու սպէտին, բարիին ու չարին: Մահը խիղճ չ'ունի»:

«Մահը յանկարծակի յուգայ. ան իրմէ առաջ սուրհանդակ չի զրկեր, իր գալուն ժամը չի յայտնէր. սկիստարթի մէջ կուգայ...»:

«Ամեն ոք անգոր է մահուան առջև ու ենթակայ անոր: Ո՞վ կրնայ յաղթել մահուան բայց միայն Յիսուսի հետևորդները: Ասիկա թերևս ձեզմէ ոմանց, գուցէ և շատերուն մանկական միամբտութիւն մը կը թուի, բայց իրականութիւն ըլլալէ չի գաղտնի երբեք:»

«Քրիստոնեայք հետեւելով ձեռն վարդապետին օրինակին կրնան Պօղոս առաքելուն պէս ըսել. «Ո՞ր է մահ քու խայթոցդ և ո՞ր է գերեզման քու յաղթութիւնդ»:»

«Արդ գիտակցինք մեր կեանքին, ըլլանք բարի, հեղ ու խոնարհ և սիրենք զԱստուած որ այնքան սիրած է մեզ...:»

Յետ յուզարկաւորութեան տրարողութեան յուզարկաւորներու հսկայ թափօրը ուղղուեցաւ գերեզմանատուն. նուագախումբը մերթ ընդ մերթ նուագեց ախար եղանակներ:

Գերեզմանատան մէջ գամբանական խօսեցան Տիար Մ. Սէֆէրեան, Ն. Շիրինեան, Յրթ. Բարեջանեան, Մ. Տամատեան, Փրոֆ. Յրթ. Զուհան և «Եփրատ» խմբագրապետ Տիար Ս. Կէպէնլեան, վեր առնելով հանգուցեալին Հայ ժողովուրդին և Հ. Բ. Բ. միութեան մատուցած անգնահատելի ծառայութիւնները: Սա վերջինը ըսաւ.—

«Շիջա՛ւ լուսաշողջող աստղ մ'ալ Հայ երկնակամարէն, թառամեցաւ ու չորցաւ զեղեցիկ, անուշաբոյր ծաղիկ մ'ալ Հայ բուրաստանէն: Այս չարագէտ տարւոյն ընթացքին պատահած մահերուն՝ տառապանքով Հայ ժողովուրդին առթած մեծ կորուստներուն վրայ կորուստ մ'ալ քու մահդ աւելցուց, ո՞վ սիրելի էգաճեան և գացիր մեծերու շարքին: Դու յիշատակդ անթառամ պիտի մնայ մեր սրտերուն խորը ու այս շիրիմդ պիտի ըլլայ ներշնչարան մը մեր հոգիներուն:»

«Յարգանք յիշատակիդ, հանգիստ յոգնատանջ ոսկորներուդ:»

Տիար Ռ. Էգաճեանի մահով Հայ ժողովուրդը կորսնցուց իր արժանաւորագոյն գաւակներէն մէկը, Հայ Աւետահամայնքը իր սիրուած ժողովանաներէն մէկը, Հ. Բ. Բ. Մ. իր ամենէն հռանդուն անդամներէն մէկը, գաղափարի անձնուրաց զինուոր մը:

Յարգանք, բիւր յարգանք իր անթառամ յիշատակին:

ԵՐՈՒԱՆԴ Լ. ԱՂԷԿԵԱՆ

ԶՅՈ ՕԳՈՍ. 24

Պէյրուք

ԱՅԼԵՒԱՅԼ

ԼՈՆՏՈՆԻ Ս. ՄԱՐԴԻՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Լոնտոնի նշանաւոր եկեղեցիներէն մէկուն— St. Martin's— in— The— Fields— գուռը երբեք չի կղաւիր: Գիշերուան ունէ մէկ վայրկեանին անոր գուռը բաց է ընդունելու բոլոր պաղած, թրջած, անկուտի և անօթի մարդերը, ինչպէս նաև պանոնք որ կուգան աղօթելու: Եկեղեցիին գեանայարկին մէջ գիշերը նստարաններուն վրայ նստելու և պառկելու ամէն ձեւերով կը հանգստանան թշուառ անապատանները: Եկեղեցին իրաւամբ արդարացուցած է գուռին վերը գրուած սա վերտառութիւնը. «Ինծի եկէք բոլոր անոնք որ յոգնած և բեռնաւորուած են, և ես ձեզ պիտի հանգչեցնեմ»: Ամէն գասակարգէ և հասակէ մարդիկ հոս կ'ընդունուին բացի խմորներէ, և այս ալ միւսներու հանգիստը չխանգարելու համար: Եկեղեցին գիշերները ապաստանարան մը ընծայելէ զատ աստուծոյն նախաճաշ ալ կուտայ և ճաշ ալ կը տրուի անոնց սրտնք առանց գործ գտնելու կը վերադառնան. երբեմն հազուադէպ ալ կը բաշխուի: Այցելու մը սապէս կը նկարագրէ.—

«Դուռը բացուելով երիտասարդ աղջիկ մը գուռս ելաւ. մաշած վերարկու մը

կը ծածկէր իր մարմինը, իր դէմքին վրայ ինկած խռիւ մազերը իր կարմրած և ուռած աչքերը գրեթէ կը ծածկէին:

— Ես չեմ կրնար քնանալ, ան հեկեկաց, զիս քնայնելու համար բան մ'ունի՞ք:

— Տեղդ գնա և ես քեզի շուտով տաք կաթ պիտի բերեմ, ըսաւ սպասարկող կինը: Աղջկան հետևեցայ և իր սենեակը մտայ: Հոս փոխանակ նստարաններու 20է աւելի տեսակ մը փայտէ կախորարաններ կային, որոնց կէսէն աւելին գլորաւուած էին երիտասարդ և ծեր կիներու կողմէ: Ռմանք կը քնանային, ռմանք պիշպիշ կը նայէին և մէկ երկուքը կը հեծկտային: Կին մը խոր կը քնանար իր բազուկը ճիշդ իր քովը ուրիշ օրօրոցի մը մէջ պառկած երախային վրայ դրած: Աղջիկը կաթը խմեց և լալէ դադրեցաւ: Ասիկա գիւղէն եկած էր գործ գանելու: Հայրը զեռ նոր մեռած էր, առանց ունէ գրամ մը իրեն թողելու: Իր սենեակին վարձքը տալու անկարող ըլլալուն համար զուրս հանուած և իր առարկաները ի պահ դրուած էին, մինչև որ նա պարտքը վճարէր:»

Պանդուխտներ, համալսարանի ուսանողներ, ընտանիքներ երբեմն հոս կ'ապաստանին: «Զարկ, և պիտի բացուի:»

ԿԱՅԾԵՐ Ե. ՄԻՋԱՋԴԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԷՆ

Յուլիսի սկիզբը Անգլիոյ Պուրնմութհ քաղաքին մէջ տեղի ունեցաւ ժողովական եկեղեցիին Միջազգային Հինգերորդ ժողովը: Յուլիս 2 ին բացման քարոզը տրուած է Ճ. Տ. Ժօնզի կողմէ, որ աշխարհի կրօնաբարոյական ներկայ ինկածութիւնը և եկեղեցիին հեղինակութեան թուլացումը և եկեղեցիին համար պայքարին աւելի քան երբեք սաստկանալը մատնանշելէ վերջ ըսած է. «Այսօր յարձակումը եկեղեցիին, աստուածաբանութեան կամ կրօնական բարոյա-

կանին դէմ չէ այլ ուղղակի Աստուծոյ դէմ: Ներկայ բարոյական ինկածութիւնը դարմանելու, եկեղեցիին հեղինակութիւնը վերահաստատելու ճամբան է զԱստուած վերսին գտնել: Ներկայ քառասային վիճակին պատճառը Աստուծոյ մասին անհաւատութիւնն է: Մարգրիկ Աստուծոյ իրականութեան պիտի հաւատան երբ մեր մէջ զԱյն իբր իրականութիւն կը տեսնեն, երբ կը տեսնեն որ Անիկա մեր կեանքերուն մէջ ներկայ է զանոնք ուղղելով, ներշնչելով և ձեւելով:»

Ժողովին հինգերորդ օրը Տր. Փալմըր, Շրիգակոյի Աստուածաբանական ձեմարանի նախագահը, և Փրոֆ. Ս. Պ. Սէլպի, Օքսֆորտի Մէնսֆիլտ Գոլէճի փրինսիպալը, խօսեցան եկեղեցիի հեղինակութեան մասին:

Տր. Փալմըր ըսաւ. «Եկեղեցիին եկեղեցի մը իր հեղինակութիւն պէտք է ըստանայ կենդանի տիեզերքէ մը:»

Փրոֆ. Սէլպի ըսաւ. «Անկատար մը չակոյթին պատուհաններէն մէկը աս է որ մենք փորձագէտին գութին յանձնուած ենք: . . . Կրօնքի մէջ փորձագէտը ոչ աստուծաբանը ոչ ալ եկեղեցագէտն է, այլ՝ սուրբ: . . . Ծշմարիտ հեղինակութիւնը կարելի է ունենալ միայն Կենդանի եկեղեցիի մը մէջ: Եկեղեցին այն է որ Բրիտոս կայ: Ներկայիս մեծագոյն վտանգներէն մէկն է եկեղեցին ահուժի մը վերածել:»

ԻՆՁ Է ՀԱՒԱՏԻԸ

Հաւատքը սորվողի մը ազանջը, մանուկի մը սիրտը ունենալ է՝ Հօրը ձայնին մտիկ ընելու համար: Հաւատքը կարգ մը գաղափարներ ընդունելու չէ, որ ճշմարտութեան ըմբռնումն է մտքի կողմանէ: Անիկա հոգիի մէկ վիճակն է որ մտիկ կ'ընէ յաւիտենական երգի տէր վանկերը բռնելու, անիկա համբերաբար սպասումի և բուռն փափաքի վիճակն է Աստուծոյ կամքը և ճամբան գիտնալու:

Հ. Պէթ

صاحب الامتياز و مدير المسئول
تيسير قريهت هاروتونيان